ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՅԵՏԱՁԳԵՑ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Երեւան, 3 Յունիսի.- Գերագոյն Խորհրդի այսօրուայ նիստը սկսուեց Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեանի Ֆրանսիա կատարած այցի վերաբերեալ զեկուցումով:

Լեւոն Տեր-Պետրոսեանը նշեց, որ թէեւ հրաւէրը ոչ պաշտօնական բնոյթ ունէր, այնուամենայնիւ Ֆրանսիայում գտնուելու ամբողջ տեւողութեան ընթացքին իշխանութիւնների կողմից պահպանուեց յարաբերութիւնների պաշտօնականութիւնը: Անդրադառնալով Միտերանի հետ ունեցած իր հանդիպումին, նա ասաց, որ երբ Ֆրանսիայի նախագահը ընդունում է հանրապետութեան Նախագահին, դա արդէն լուրջ քաղաքական քայլ է: Միտերանը շեշտել է նաեւ, որ ինքը կՀողջունի ցանկացած յարաբերութիւններ Հայաստանի հետ: Լեւոն Տեր-Պետրոսեանը նշեց նաեւ, որ բազմաթիւ հանդիպումներ եւ շփումներ են ունեցել մամուլի ներկայացուցիչների հետ:

Եզրափակելով ելոյթը, նա ասաց, որ արեւմուտքը արդէն չի խորշում հանրապետութիւնների հետ պետական մակարդակով յարաբերութիւններ հաստատելուց:

Այնուհետեւ Նախարարների Խորհրդի նախագահի առաջին տեղակալ Հրանտ Բագրատեանը, որ նախագահի հետ մաս էր կազմել Ֆրանսիա այցելող խմբին, տեղեկացրեց Ֆրանսիայի նորընտիր կառավարութեան անդամների հետ ունեցած իր տեսակցութիւնների մասին: Որպէս այդ հանդիպումների արդիւնք ստորագրուել է 6 բաժին պարունակող մի արձանագրութիւն, որով նախատեսւում է իրականացնել 40-45 տնտեսական միջոցառումներ՝ կադրային, էներգետիկայի, գիւղատնտեսութեան, կապի եւ շինարարութեան ասպարէզներում: Այս գծով Հայաստան պիտի ժամանեն Ֆրանսիական պատուիրակութիւններ: Դրական գնահատական տալով այցելութեանը, Հրանտ Բագրատեանը նկատել տուեց, որ այնուամենայնիւ շատ բան կախուած է «մեր աշխատանքից եւ քաղաքական իրավիճակից»:

Այնուհետեւ Լեւոն Տեր-Պետրոսեանը կարճ մի ելոյթով անդրադարձաւ Հայաստանի, Արցախի կացութեանը, նշելով, որ այս պահին հիմնական երկու հարցեր է դիմագրաւում Հայաստանը. պատանդներին վերադարձնելու եւ Բերդաձորից ու Հադրութից բռնագաղթուածներին իրենց գիւղերը վերադարձնելու հարցերը:

Գերագոյն Խորհուրդը հաստատեց նիստի օրակարգը եւ անցաւ հանրապետութեան ներքին իրավիճակի քննութեանը: Մի շարք պատգամաւորներ ելոյթ ունեցան, սակայն յստակօրէն ընդգծւում էր անորոշութիւնը. ելոյթներում ամեն ինչի մասին խօսւում էր: Սա էր պատճառը, որ մի քանի պատգամաւորների առաջարկութիւնից յետոյ հարցի քննարկումը մէկ շաբաթով դադարեցուեց: